չան և տվին գրամ, զի հարկատուք կեսն մուճակս ունիցին, զի մի խափանեսցի գործն և վաստակն իւրեանց. և նա հրաման արարեալ մունետկին, աղաղակեալ ի փողոցս և ի հրապարակս քաղաքիս, Վա՛յ տալով թէ ոչ ունիցին, ասէ, զկեսն պապուճ։

Յաւուրսն յայսոսիկ զէնկիչէր աղասին սպանեալ վէզիրին վասն սակաւ իրաց, ասելոյն թէ ի սովոյ ջարդին զօրքս ասա, երթեալ ի տեղիս իւրեանց ձմեռեսո[ցեն] և ապա գայցեն ի դէմ գարնան։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ յղեալ մարդ վէզիրին առ զափուքհեասի պարոնն Պուղտանայ եւ զգեցուցեալ նմա խիլայս իշխանութեան և առաքէ զնա ի Պո[ւղ]ոան տիրել նմա, զոր ի վաղուց զայս ի Տաճկաց ոչ ոք կարաց առնել։ Եւ Ուլահու պարոնն հին պատերազմեալ ընդ Նորոյ և Թաթարն բազում աւերս արարեալ և ջարդեալ ի զօրաց Նոյա բազումս, մինչև նստուցանէ զնոր պարոնն անդ (Բառը կորած) Թուրքաց, որում անուն ասէին Ճիւան (Բառը կորած)։

Յաւուրս այսոսիկ եկին յէտրէնու փաշային մարդն և ասի առաքեալ վէքիլն, ոչ լինելով բան և ոչ մի վասն Երուսաղէմայ, քանզի առեալ վէզիրին զարդքն և եդեալ ի ներքոյ ծնկացն և գրեալ պատասխանի առ որդին Թայարի կնքով, ոչ գիտացաք։ Այլ սոքա խորհուրդ առեալ ի մէջ և գրել ետուն ինձ առ վարդապետն Երուսաղէմայ՝ զի տեսցեն ընդ փաշային բան և առցեն արդ և ի գատաւորէն և ելեալ եկեսցեն ասա միաբանօք և ըստաւորօք. և գնացին Ուրբաթի օր Ե-ին[1]) Մարտի։ Եւ գրել ետուն Մարտիրոս վարդապետին ևս ի Կաֆա, զի և նա եկեսցէ՝ եթէ տեսեալ լցէ զգործ որ առ գլխաւորս Թաթարին։

1) Զ-ին.